

Արարատ Ստեփանյան

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԳԱՐԹԸ XI ԴԱՐՈՒՄ

Բանալի բառեր - Վասպուրական, Արծրունիներ, գաղթ, Եվդոկիա, Սենեքերիմ, Բյուզանդիա, հայկական իշխանություն, զորք, պատմիչներ, ամիրայություն:

1. Հայության արտագաղթի հիմնական պատճառները 10 –րդ դ. երկրորդ կեսին և 11-րդ դ. սկզբին

11-րդ դարում ի թիվս Հայաստանի այլ շրջանների, Վասպուրականի հայության ստվար զանգվածները ևս գաղթեցին Փոքր Ասիայի հարավարևելյան շրջանները: Վասպուրականի հայության արտագաղթի պատճառներից են 11-րդ դարում սելջուկների ավերիչ արշավանքները Հայաստան, ինչի հետևանքով հայությունը հեռանում էր հիմնականում Հյուսիսային Միջագետք, Ասորիք և Կիլիկիա:

Այդ ժամանակ արաբների և բյուզանդացիների բախման կիզակետ դարձավ հատկապես Կիլիկիան: Բյուզանդիան փորձում էր ձեռքել արաբաբյուզանդական սահմանային ամրությունները Կիլիկիայում: Երկրամասին տիրելու համար պայքար էր սկսվել Ասորիքի և Միջագետքի իշխանների ու մուսուլման ամիրաների միջև, ինչից օգտվեց Բյուզանդիան 10-րդ դարի 60-ական թվականներին՝ ռազմակալելով Կիլիկիան¹: Այս վիճակում 11-րդ դարի սկզբին սկսվում են սելջուկյան արշավանքները, որոնց հետևանքով ավելի մեծացավ արտագաղթը:

Վասպուրականի վրա սելջուկների արշավանքների և կատարած վայրագությունների մասին Թովմա Արծրունին գրում է. «Եւ նոքա ունելով զբնութիւն արիւնարբու գազանի, զի են ազգք ահաւոր տեսլեամբ, զի տեսիլ դիմաց նոցա զարհուրեցուցանէ զտեսողսն եւ ահաբեկ առնէ, եւ բնակութիւն նոցա ի լերինս եւ ի դաշտս եւ յանապտս որպէս զվայրենի գազանացս, եւ են չաղղակերք որպէս զգազանս. ոչ պատուեն զմեծամեծս, ոչ խնայեն յալիս եւ ի հարկիսս ծերոցն, ոչ ողորմին երիտասարդին եւ տղայոցն, ոչ խնայեն ի մանկութիւն ումեք. ազգ չար եւ դառնացող, ազգ, որ ոչ ուղղեաց զսիրտ իւր և ոչ հաստատեաց առ Աստուած զհոգի իւր»²: Սամվել Անեցին Վասպուրականի գաղթը կապում է սելջուկների ներխուժման հետ, «ՌԲ (իմա՝ 1002 թ.- Ա. Ս) Ելին ազգին թուրքաց և աւերեցին զգաւառն Վասպուրականի. և յոյժ

¹ Տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան, *Արաբական սահմանային ամրությունների գոտին (Սուղոր)*, «Պատմա-բանասիրական հանդես», N 2, Երևան, 1981, էջ 148:

² Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, Եր, 2006, էջ 335:

նեղեալ լինէր թագաւորն նոցա Սենեքարին: Վասն որոյ յետ ԻԲ. (իմա՛ 22 Ա. Ս) Ամի նեղութեան՝ ետ զաշխարհն իւր ի Վասիլ թագաւորն ի ՆՀ (իմա՛ մարտ 16, 1021 թ. մարտի 16, 1022 թ.- Ա. Ս). թվիս»: Այնուհետև. «ՌԻԳ. (իմա՛ 1023 թ.- Ա. Ս) Ի թուին Հայոց ՆՀ. ետ Սենեքերին զիւր թէմն ի Վասիլն և էառ զՍաստ (իմա՛ Սեբաստիա- Ա.Ս) իւր թեմօքեն»¹:

Հակառակորդի դեմ պայքարը Վասպուրականում զլխավորում էին Վասպուրականի Սենեքերին թագավորի (1003-1026) որդի Ղավիթը և նրա խնամակալ Շապուհ սպարապետը, որոնք թեև քաջաբար դիմադրում են թշնամուն, սակայն չկարողանալով դիմանալ՝ նահանջում են: Իսկ Սենեքերինը, որ գտնվում էր Ռշտունյաց գավառի Ոստան ավանում, թշնամու հարձակման մասին իմանում է իր մոտ եկած Ղավիթ թագաժառանգից: Սենեքերին թագավորը Ղավիթին 1021թ. ուղարկում է Կոստանդնուպոլիս՝ Վասպուրականը Բյուզանդիային հանձնելու և Բյուզանդիայում դրա փոխարեն հայերին տարածք հատկացնելու համար, որտեղ նրան թագավորավայել ընդունելություն են ցույց տալիս²:

Իրարամերժ կարծիքներ կան նաև բանակցությունների վայրի վերաբերյալ: Լեոն գտնում է, որ Ղավիթի բանակցությունները կայսեր հետ տեղի են ունեցել ոչ թե Կոստանդնուպոլսում, այլ Տրապիզոնում՝ փաստարկելով, որ Տրապիզոնը Կոստանդնուպոլսի ճանապարհի վրա է և այստեղ էլ կա սուրբ Սոֆիայի անունով եկեղեցի, որ կայսրը այդ ժամանակ գտնվում էր Տրապիզոնում³: Նույնպիսի տեսակետ է հայտնում նաև Վ. Թեմուրճյանը. «Կայսրը 1020 թ. իր մոտ Տրապիզոն է հրավիրում Սենեքերինի որդի Ղավիթին՝ Վասպուրականը Սեբաստիայի հետ փոխանակելու պայմանների մասին բանակցելու համար⁴»: Մեր կարծիքով՝ պատմական աղբյուրներում եղած տեղեկությունները կասկած չեն հարուցում, ուստի ամենայն հավանականությամբ բանակցել են Կոստանդնուպոլսում:

Վասպուրականի հայության արտագաղթի մյուս կարևոր պատճառներից էր Բյուզանդիայի նկրտումները հայկական հողերի նկատմամբ: Ինչպես իրավացիորեն նշում է Վ. Իսկանյանը, արևելքից սելջուկների արշավանքների ուժգնացման հետ միաժամանակ մեծանում էր Բյուզանդական կայսրության ճնշումը Վասպուրականի վրա⁵: Բյուզանդիան Վասպուրականի թագավորության նկատմամբ իր նկրտումներում օգտագործում էր այն հանգամանքը, որ սելջուկների հարվածներից տուժած և հարևան արաբական ամիրայությունների հարձակման թիրախ դարձած Վասպուրականը հույսը կապում էր Բյուզանդիայի հետ: Վասիլ Բ-ն (976-1025) 1000 թ. գրավում է Տայքի

¹ Տե՛ս Սամուել քահանայի Անեցոյ Հուարմունք ի գրոց պատմագրաց, Վաղ., 1893, էջ 104-105:

² Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, նույն տեղում, էջ 337:

³ Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, Երկրորդ հատոր, Եր, 1947, էջ 654-655:

⁴ Վ. Թեմուրճյան, Հայերի արտագաղթը դեպի Գամիրք, ՀՍՍՀ ԳԱ Տեղագիրք, Եր, 1955, N 2, էջ 78:

⁵ Տե՛ս Վ. Իսկանյան, Արծրունյաց արտագաղթի մասին, «ՊԲՀ», N 3, Եր, 1965, էջ 73:

Դավիթ Կուրապաղատի տիրույթները, ինչպես նաև Բասենը, Հարքը և Ապահունիքը: Վերջինս սահմանակից էր Վասպուրականին¹: Իսկ սա հարմար առիթ էր Վասպուրականը գրավելու համար: Բյուզանդական կայսրությունը օգտվում էր նաև արևելքից Վասպուրականի համար ստեղծված նոր վտանգի՝ սելջուկների ներխուժման պատճառով առաջացած տագնապից: Բյուզանդական կայսրությունը 1020 թ. Հայաստանի ռազմական ուժը ոչնչացնելու և երկիրը ռազմակալելու համար ձեռնարկում է ժողովրդի տեղահանման քաղաքականություն: Սկզբում Փոքր Ասիա են տեղափոխվում Վասպուրականի թագավորության հայերը²:

2. Վասպուրականի թագավորության հայության գաղթը և հաստատումը Սեբաստիայում ու հարակից շրջաններում

Վասպուրականի թագավորության հայության գաղթի մասին տեղեկություններ են պահպանվել Թովմա Արծրունու³, Արիստակես Լաստիվերտցու⁴, Ստեփանոս Տարոնեցու⁵, Մատթեոս Ուռհայեցու⁶, Սամվել Անեցու⁷ և Վարդան Բարձրբերդցու⁸ աշխատություններում:

Վասպուրականի թագավորության փոխարեն Արծրունիներին տրվում են Փոքր Հայքի Սեբաստիա⁹, Լարիսա (գտնվում է Սեբաստիայից հարավ. Ա. Պատրիկը նշում է, որ Լարիսան բերդ էր,¹⁰ իսկ Ա. Ալպոյաձյանը ընդունում է Լարիսայի նույնացումը Larisa Herpai բնակավայրի հետ, որը գտնվում էր Երեկեչեն գյուղի մոտ¹¹) և Ավարա քաղաքները (Սեբաստիայից հարավ-արևելք, Եփրատի վտակ, այժմ՝ Թոքմա-սուի գետի և Փալգլը-սուի ջրկիցի մերձակայքում): Սենեքերիմ Արծրունու հետ Սեբաստիա գաղթեցին նրա որդիները՝ Դավիթը, Աբուսահլը, Ատոմը, Կոստանդինը և Վեստը¹²: Գաղթում են նաև Գուրգեն Անձևացու երեք որդիները՝ Դերենիկը, Գագիկը և Աշոտը¹³: Վասիլ Բ-ն Սենեքերիմին շնորհում է «պատրիկ ու զորավար Կապադովկիայի¹⁴» պատվաստիճանները: Արծրունյաց տան Անանուն պատմիչը Վասպուրականից Կապադովկիա հայերի զանգվածային գաղթի մասին գրում է. «...Եվ փոխեցին զհայրենի տունսն իւրեանց Հայկազունքն Արծրունիքն Սենեքերիմ ի թուին Հայկազեան տունարին ՆՀ (470), և դեմ եղեալ գնացին յաշխարհն յունաց ԺԴԴ (14000) արամբք, թող

¹ Տե՛ս Ստեփանոս Տարոնեցույ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 183:

² Տե՛ս Հ. Հարությունյան, Հայաստանը 9-11 դարերում, Եր., 1959, էջ 256:

³ Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, նույն տեղում, Եր., 2006:

⁴ Տե՛ս Արիստակես Լաստիվերտցի, Պատմութիւն, Թիֆլիս, 1912:

⁵ Տե՛ս Ստեփանոս Տարոնեցույ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885:

⁶ Տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Եր. 1973:

⁷ Տե՛ս Սամուել քահանայի Անեցույ Հուարքմունք ի գրոց պատմագրաց, Վաղ., 1893:

⁸ Տե՛ս Վարդան Բարձրբերդցի, Պատմութիւն Տիեզերական, Մոսկվա, 1861:

⁹ Տե՛ս Պատմագիրք Յուշամատեան Սեբաստիոյ և Գաւառի Հայութեան, կազմեց՝ Ա. Ն. Պատրիկ, Պէյրուս, 1974, էջ 1:

¹⁰ նույն տեղում, էջ 75:

¹¹ Տե՛ս Ա. Ալպոյաձյան, Պատմութիւն հայ Կեսարիոյ, հ.Ա., Գահիրէ, 1937, էջ 419:

¹² Տե՛ս Վարդան Բարձրբերդցի, Պատմութիւն Տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 125:

¹³ Նույն տեղում, էջ 125:

¹⁴ Տե՛ս Ա. Ալպոյաձյան, Պատմություն հայ գաղթականության, հ. Բ, Գահիրէ, 1955, էջ 507:

զկանայս և զմանկտիս. և արկան ընդ լծով ծառայութեանն հռռոնոց...»¹: Անանունի այս տեղեկության մակաբերումը վիճահարույց է: Ուսումնասիրողներից ոմանք կարծում են, որ այն նշանակում է, թե բացի 14 հազար այրերից գաղթել են նաև նրանց կանայք և երեխաները, ընդհանուր թվով 40-50 հազար մարդ²: Իրականում պատմիչի ասածը նշանակում է, որ կանանց և երեխաներին նրանք իրենց հետ չեն գաղթեցրել, քանի որ տղամարդիկ, ըստ երևույթին, անցնում էին բյուզանդական բանակում զինվորական ծառայության:

Սամվել Անեցու վկայությամբ 1021թ. Սենեքերիմը Բյուզանդիային է հանձնում 4000 գյուղ, 72 բերդ, 8 քաղաք³: Մատթեոս Ուռհայեցին գրում է, որ հանձնվել է 4000 գյուղ, 72 թեմաբերդ, 115 վանք⁴: Այս հակասական տեղեկությունները ծնունդ են մի շարք նույնքան հակասական մեկնաբանությունների:

Մ. Չամչյանցը, Վասպուրականից Կապադովկիա գաղթած հայերի թիվը հաշվում է 400 000, որը, ըստ նրա, կազմում է Վասպուրականի բնակչության մեկ երրորդը⁵: Սակայն պետք է նշել, որ Մ. Չամչյանցը չի նշում աղբյուրը, որից օգտվել է, ուստի աղբյուրներում հիմնավորում չգտնող այդ թիվը խիստ կասկածելի է: Համեմատելով հեղինակների բերած թվական տվյալները՝ պետք է նշել, որ միմյանց միայն համապատասխանում են Սամվել Անեցու և Մատթեոս Ուռհայեցու տվյալները: Անանունի բերած թվական տվյալները խիստ տարբերվում են մնացած հեղինակների բերած տվյալներից: Այս առիթով Գ. Միքայելյանը գրում է. «Կարելի է ենթադրել, թե այդ մարզի բնակչության թիվը հասնում էր մեկ միլիոնի կամ մի քիչ ավելին է: Բայց գաղթեցվել է 14 հազար ընտանիք, և եթե ուշադրության առնենք այն հանգամանքը, որ ընտանիքները այդ ժամանակ խոշոր են եղել, ապա գաղթականների թիվը կարելի է համարել 90 հազար»⁶:

Իրականում, տեղեկությունների քննությունը ցույց է տալիս, որ խոսքը գաղթած տղամարդկանց մասին է, որոնք Վասպուրականում են թողել («թող») կանաց և երեխաներին: Ի դեպ, հայտնի էլ չէ, ի վերջո նրանց տեղափոխել են Բյուզանդիա, թե ոչ: Մեր կարծիքով՝ թվական տվյալների այդ հակասությունը գալիս է գաղթը մեկ փուլով իրականացած չլինելու իրողությունից: Հավանաբար, քաղաքների և գյուղերի զիջումը և 100 հազարավորների գաղթը միայն հաջորդել է 14 հազար այրերի գաղթին, որի պատճառով էլ Անանուն գրում է. «...Թող զկանայս և զմանկտիս»: Այսինքն՝ առաջին փուլում Բյուզանդիա են հեռացել 14 հազար տղամարդիկ, իսկ երկրորդում բնակչության ավելի հոծ զանգվածներ:

¹ Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, նույն տեղում, էջ 337:

² Տե՛ս Ա.Ն. Պատրիկ, նույն տեղում, էջ 51:

³ Տե՛ս Սամուել քահանայի Անեցույ, նույն տեղում, էջ 3:

⁴ Տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, ժամանակագրություն, Եր. 1973, էջ 32:

⁵ Տե՛ս Մ. Չամչյանց, Պատմություն Հայոց, Խ. Բ, Վենետիկ, 1785, էջ 903:

⁶ Գ. Միքայելյան, Կիլիկյայի հայկական պետության պատմություն, Եր., 2007, էջ 58:

Վասպուրականի մարդաթափության մասին Անանունը դառնությամբ գրում է. «Կատարեցաւ ասացեալն ի մարգարէէն Երեմիայ ի վերայ Հայաստան աշխարհիս, ևս առաւել ի գաւառն Վասպուրականի ասածը թե. ժողովուրդք իմ անտերունչք շրջեսցուք»¹ :

3. Գաղթի թվականը

Այժմ անդրադառնանք արատագաղթի տարեթվի խնդրին, որը պատմագրության մեջ հակոտնյա կարծիքների տեղիք է տվել: Պատմագրության մեջ մինչ օրս էլ շրջանառվում են երեք տարբեր տարեթվեր՝ 1016², 1021³ և 1022⁴: Ի դեպ, Ա. Ալպոյաձյանը Արծրունիների արտագաղթի տարեթիվ է նշում մի դեպքում 1016 թ., մեկ այլ դեպքում՝ 1021 թ. : Հ. Մանանդյանը ևս սկզբում ընդունում է, որ Արծրունիների գաղթը տեղի է ունեցել 1016 թ., բայց հետագայում ընդունում է 1021 թ.⁵: Ինչպես նկատել է Վ. Վարդանյանը, թե՛ 1016, թե՛ 1018 և թե հաջորդ տարիների ընթացքում Սենեքերիմ Արծրունին և յուրայինները դեռևս չէին կարող գաղթել այն պատճառով, որ այդ ժամանակահատվածում Վասիլ Բ-ն, որ զբաղված էր բուլղարական պատերազմով, հնարավորություն չուներ խորությամբ զբաղվելու արևելյան գործերով⁶: Ուսումնասիրողները 1021 թ. վկայակոչում են՝ հիմք ընդունելով Անանուն պատմիչի և Սամվել Անեցու վկայությունները: Ըստ նրանց՝ հայոց 470 թ. համապատասխանում է 1021 թ.: Սամվել Անեցին իր ժամանակագրության մեջ Արծրունիների՝ արտագաղթի մասին նշում է. «ՌԲ (իմա՛ 1002 թ.- Ա. Ս) Ելին ազգին թուրքաց և աւերեցին զգաւառն Վասպուրականի. և յոյժ նեղեալ լինէր թագաւորն նոցա Սենեքարիմ: Վասն որոյ յետ ԻԲ.(իմա՛ 22 Ա. Ս) Ամի նեղութեան՝ ետ զաշխարհն իւր ի Վասիլ թագաւորն ի ՆՀ (իմա՛ մարտ 16 ,1021 թ. մարտի 16, 1022 թ.- Ա. Ս). թվիս»: Այնուհետև Սամվել Անեցին գրում է. «ՌԻԳ. (1023 թ.- Ա. Ս) Ի թուին Հայոց ՆՀ. ետ Սենեքերիմ զիւր թէմն ի Վասիլն՝ և էառ զՍաստ(իմա՛ Սեբաստիա- Ա.Ս) իւր թեմօքեն»⁷: Հաջորդ տողում նույն իրադարձությունը թվագրվում է Հայոց ՆՀ թվականով, որի հետևանքով հետագոտողները գաղթը թվագրել են 1021 թ.՝ հիմքում դնելով $470+551=1021$ թ. հաշվարկը: Բայց նման մոտեցումը հղի է սխալներով : Խնդիրն այն է, որ փրկչական և ներկա թվականի մեջ տարբերությունը կազմում է 2 տարի⁸ : Սա խոսում է այն մասին, որ գաղթը տեղի է ունեցել $1024-2=1022$ թվականին: Համեմատելով հայոց 470 թ. և

¹ Տե՛ս Թովմա Արծրունի և Անանուն, նույն տեղում, էջ 335:

² Տե՛ս Ա. Ալպոյաձյան, նույն տեղում, էջ 338:

³ Տե՛ս Ս. Չամչյանց, նույն տեղում, էջ 903:

⁴ Տե՛ս Լեո, Երկերի ժողովածու, հ. Բ, Եր, 1967, էջ 634; Տե՛ս Վ. Իսկանյան, նույն տեղում, էջ 82:

⁵ Տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ, Եր, 1977, էջ 21:

⁶ Տե՛ս Վ. Վարդանյան, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը 908-1021թթ., Եր, 1969, էջ 210:

⁷ Տե՛ս Սամուել քահանայի Անեցույ, նույն տեղում, էջ 104-105:

⁸ Տե՛ս Ա. Աբրահամյան, Ներկա թվականի սկզբնավորությունը ըստ հայ տոմարագետների հաշվումների, «ՊԲՀ», 1970, N 3, էջ 100:

փրկչական թվականի վերաբերյալ հաշվարկը՝ կարող ենք եզրակացնել, որ Վասպուրականի հայությունը գաղթել է 1022 թ. սկզբին: Ավելին, եթե բանակցությունները տեղի են ունեցել 1021 թ., նույն թվականին գաղթն իրականացվել չէր կարող:

1022 թվականին գաղթի տեղի ունենալը հիմնավորվում է նաև Եվդոկիա (Սեբաստիա) գավառի Ոսկեբերան վանքում առկա արձանագրությամբ. «ՍԵՆԵՔԵՐԻՍ ԱՐՔԱՅ ՀԱՅՈՑ ՄԵԾԱՑ ԵԿՆ ԵՒ ՇԻՆԵԱՑ ՏԱՃԱՐՍ...ՆՀԱ (1022/1023)¹»:

1022 թվականը վկայակոչվում է նաև 11-րդ դարի արաբ պատմիչ Յահյա Անտիոքացու մոտ: Նրա տարեգրության թարգմանիչ ակադ. Վ.Ռ.Ռոզենի կարծիքով՝ անհերքելի են Յահյա Անտիոքացու բերած տվյալները, ըստ որոնց Վասպուրականի զիջումը կայսրությանը տեղի է ունեցել 1021 թ. վերջին կամ 1022-ի սկզբին²:

Այսպիսով, վերոնշյալ փաստերի հիմնավորումը հավաստում է գաղթի՝ 1022 թ-ին եղած լինելու մասին:

Ararat Stepanyan, Армянское переселение Васпураканского Королевства в XI веке – В начале 11-ого века сформировавшаяся тяжелая ситуация вокруг Васпуракана привело к переселению местных армян в город Себастья и близлежащие районы Маленького Айка. Переселение произошло в два этапа: вначале ушли мужчины, а повальное переселение населения началось в начале 1022 года.

Ararat Stepanyan, Vaspurakan Kingdom Armenian's relocation in the XI century - In the beginning of the 11th century a dire situation around Vaspurakan resulted to the displacement of local Armenians in Sebastia city and nearby areas of Little Hayk. The relocation took place in two stages: first, the men were gone, and a total transfer of population began in early 1022.

Արարատ Ստեփանյան-ԵՊՀ պատմության ֆակուլտետի սիյուռքագիտության ամբիոնի հայցորդ:

¹ Տե՛ս Ա. Ալպոյաճյան, Պատմություն Եվդոկիո Հայոց, Գահիրէ, 1952, էջ 167-168:

² Տե՛ս Извлечения из летописи Яхьи Антиохиского, издал, перевел и объяснил Барон В.Р. Розен. Записки императорской Ак. Наук, т. 44. СПб., 1883, էջ 62: